ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

10.09.2025թ.

2025 թվականի Սեպտեմբերի 10-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի «Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան»-ում տեղի ունեցավ հանրային քննարկում: Օրակարգում՝ Վաղարշապատ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը ներկայացնել և բնակչության հետ քննարկել Վաղարշապատ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման քվեարկության դրված առաջարկները, ծրագրերի օգուտներն ու արդյունքները, ինչպես նաև իրազեկել և նախապատրաստել քվեարկության փուլին:

Հանրային քննարկմանը ներկա էին «Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան»-ի աշխատակազմը, Վաղարշապատի համայնքապետարանի ոլորտային ներկայացուցիչները, ինպես նաև բնակիչներ: Մուտքի խոսքով հանդես եկավ Վաղարշապատի համայնքապետի օգնական Մանվել Մելիքյանը, ով մանրամասն ներկայացրեց 2025 թվականի մասնակցային բյուջետավորման ողջ գործընթացը, մասնակցային բյուջետավորման մոդելի հիմնական սկզբունքները, Վաղարշապատ համայնքում ներկայացված և ընտրված ծրագրային առաջարկները, համայնքապետարանի կայքում գրանցման և քվեարկության գործընթացը: Այնուհետև խոսքը փոխանցվեց Վաղարշապատի համայնքապետի մամուլի քարտուղար Ռոզա Կարապետյանին, ով հորդորեց հնարավորինս ակտիվ լինել քվեարկության ողջ ընթացում և կարևորեց վերջիններիս դերը ծրագրի արդյունավետ իրականացման գործում: Հիշեցրեց նաև, որ բնակիչները կարող են քվերակել երեք ծրագրային առաջարկի օգտի:

Հանձնաժողովի նախագահ՝ Մանվել Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մարիամ Զաքարյան